

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

**Խլուրդային,
անկանգ
արշավանք մոցա
Համարում են քաղ
դեղի արեգակե
զգած...**

ԵՐԻՇԵ ՉԱՐԵՆՑ



ԼԵՆՆԻԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԼԵՆՆԻԴ
ԳՐԻԳՈՐՅԱՆ.
«Հակառակորդին
պիտի ցույց տալ,
որ ոչ միայն
բանակն է ամուր,
այլև թիկունքը»**

Բանակաշինություն

Այսօր, երբ տարածաշրջանում լիակատար խաղաղություն չի հաստատվել, խաղաղ բնակչության պաշտպանության հիմնախնդիրը չի կորցնելու երբեք իր այժմեականությունը: Եթե «խաղաղություն են ցանկանում, պատրաստվիր պատերազմի» ձեռակերպումը եւս իր թարմությունը չի կորցնելու: Եթե հակառակորդը (Աստված մի արասցե) կրկին հարձակման փորձ անի, կկարողանանք պաշտպանել ինքներս մեզ: Օրախնդիր այս հարցերի պատասխանը պիտի տային Կապանում մայիսի 10-ից մեկնարկած զորահավաքային զորավարությունները, որ ավարտվեց օրերս:

Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեննիդ Գրիգորյանը «Այունյաց երկիր» հետ եւս զրույցը սկսել է այն ճշմարտության հաստատումով, որ ելնելով հանրապետության աշխարհաքաղաքական դիրքից, ազգային յուրահատկություններից, անցյալում ունեցած դառը կորուստներից՝ մարտունակ բանակ եւ ամուր թիկունք ունենալն առավել կարեւոր է: ««Ինչո՞ւ են եւ ոչ ուրիշ մեկը» արատավոր մտայնության պատճառով դժվարությամբ ենք կարողացել կազմակերպել մեր ինքնապաշտպանությունը», - խորհրդածուրն է Լեննիդ Գրիգորյանը եւ ավելացնում, որ նույնը վերաբերում էր նաեւ զորավարությունների, ինչպէս ոչ բոլորն էին պատասխանատվությամբ մտնեցում:

Ինչ վերաբերում է այս անգամվա զորավարությանը, ինչպէս մեր զուգակիցը փաստեց. «Նման լայնամասշտաբ զորավարություն երբեք չի իրականացվել, ամենակարեւորը ճշտեցինք, թե որ ծառայությունը որ տեղում եւ որ ժամանակահատվածում է թերառում, եւ ինչ պետք է անել իրավիճակը շտկելու համար: Վերջերս հաճախակի են հնչում մտքեր, թե մարդիկ հեռացել են հանրապետությունից, իսկ այստեղ գտնվողներից ոմանք պատրաստ չեն պաշտպանելու մեր սահմանները եւ այլն, եւ այլն: Թերահավատներին շտապեմ հավաստիացնել, որ դա բնավ էլ այդպես չէ: Ում զինվորական մասնագիտությունը, տարիքը, առողջական վիճակը հնարավորություն էին ընձեռել, ընդգրկել էինք զորավարությունների մեջ, եւ նրանք հուսախաբ չեն արել»:

Մինչ այժմ զորավարությունները հիմնականում անցկացնում էին զինկոմիսարիատները, իսկ պատասխանատուն լինում էր զինվորական կոմիսարը, բայց այս անգամ յուրաքանչյուր պաշտոնային վրա, օրենքով սահմանված կարգով, դրված էր մի որեւէ պարտականություն, իսկ իրականացված նախապատրաստական աշխատանքների շնորհիվ նախատեսված ժամին կարողացան զորամասերը համալրել թե մարդկային ռեսուրսներով, թե տեխնիկական միջոցներով, զորավարություններից հետո Սյունիքի մարզպետի մասնակցությամբ քննարկվել են արդյունքները, իսկ կարեւոր այդ կամպանիայից հետո իրենք ՇԱՐՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 2

Գորայքում զարգացման նոր հեռանկարներ են բացվել

Սարգի գյուղեր

Գորայքը (նախկինում՝ Բազարչայ) գտնվում է Սիսիան-Երեւան ավտոմայրուղու աջակողմյան հատվածում՝ Ամուլսարի արեւելյան լանջերին հարող մի սարահարթի, ծովի մակերեսույթից 2150 մ բարձրության վրա՝ Սիսիանից 35 կմ արեւմուտք: Գյուղը կառուցվել է Որոտանի կասկադի շինարարության կապակցությամբ, որովհետեւ նախկին գյուղը՝ Բազարչայը, մնացել է Սպանդարյան ջրամբարի տարածքում: Բազարչայը տարածված էր Որոտանի վերին հոսանքի ձախափնյա մասում՝ շրջապատված մարգագետիններով ու արոտավայրերով: Լիճակը Սյունիքի, Վայոց ձորի եւ Նախիջեւանի

սահմանների հանգուցակետում՝ Բազարչայը դարձել էր անասունների եւ գյուղատնտեսական մթերքների վաճառքի կենտրոնատեղի եւ այդ մեծաշնորհը պահպանեց մինչեւ 1960-ական թվականները՝ նաեւ շնորհիվ մոլորկանների: Բավականին երկար ժամանակ Բազարչայը դատարկվել էր եւ միայն 1877թ. վերաբնակեցվեց մոլորկաններով, որոնց ցարական իշխանությունները բերել էին Շուշվա Բալուջա գյուղից: Այդ ժամանակ իշխանությունները տանում էին այնպիսի քաղաքականություն, որի համաձայն՝ կայսրության ծայրամասերի աշխարհագրատրատեգիական բոլոր կարեւոր կետերում պիտի բնակություն հաստատեին ռուսները: Եվ քանի ՇԱՐՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 3

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ. Ծնվել է 1958թ. Սյունիքի մարզի նախկին Բազարչայ գյուղում: 1985թ. ավարտել է Հայկական գյուղատնտեսական պետական ինստիտուտը եւ ստացել ինժեներ-մեխանիկի որակավորում: 1985-88թթ. աշխատել է Սիսիանի պետական տոհմային խոզաբուծական տնտեսությունում, 1988-91թթ.՝ Գորայքի պետական տնտեսությունում՝ ինժեներ-մեխանիկ: 1991-96թթ. Գորայքի գյուղխորհրդի նախագահ է եղել: 1996-2005թթ. աշխատել է Գորայքի գյուղապետարանում՝ աշխատակազմի քարտուղար, իսկ 2005թ. առ այսօր Գորայքի գյուղական համայնքի ղեկավարն է:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն Սյունիքում

Մայիսի 31-ին Տաթևի վանք էր այցելել Ս. Ս. Ս. Ս. Գարեգին Բ-ն՝ հայտնի ձեռներեց եւ բարերար, IDeA հիմնադրամի խորհրդի նախագահ Ռուբեն Վարդանյանի ուղեկցությամբ: Այցելության նպատակն էր՝ քննարկել «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակներում իրականացվելիք Տաթևի վանքի հարակից տարածքների զարգացման նախագիծը, որը ներկայացրեց վանքի վերանորոգման աշխատանքների գլխավոր ճարտարագետ Արտյոմ Գրիգորյանը: Քննարկվեցին նաեւ վանական համալիրի պահպանության կազմակերպման եւ կառուցապատման գոտիների հայեցակարգը, Ար Պողոս Պետրոս եկեղեցու որմնանկարների թվայնացման,

համալիրի ստորգետնյա ջրապաշտպան պատի կառուցման խնդիրները, Սբ Աստվածածին եկեղեցու վերանորոգման էսքիզային նախագիծը, ինչպես նաեւ համալիրում նախատեսվող միաբանության շենքի տեղակայման հարցը: Այնուհետեւ ճոպանուղու Հալիձորի կայանում Ռուբեն Վարդանյանը ներկայացրեց այդ տարածքի զարգացման ծրագիրը: Ամենայն հայոց կաթողիկոսին ուղեկցում էին նաեւ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը եւ Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը:



Ս.Ս.Ս.Ս. Գարեգին Բ կաթողիկոսը, բարերար, IDeA հիմնադրամի խորհրդի նախագահ Ռուբեն Վարդանյանը եւ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը

ԼՈՒԲԱՐ ԴՎՎԹՅԱՆ

ՆԵԼՍՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ. «Զի բացառվում, որ Լիազորություններս վայր դնեմ հունիսի 8-ի ընտրությունից անմիջապես հետո՝ չսպասելով վերջնաժամկետին՝ հունիսի 20-ին»

Ֆիգիշ

Նախընտրական բուռն օրեր ապրող Գորիսում, կարծեք, մի հարց դուրս է մնացել ուշադրությունից. չորս ընտրաշրջան Գորիս քաղաքը ղեկավարած Նելսոն Ոսկանյանը հեռանում է քաղաքապետարանից: Նա, ինչպես ավելի վաղ էր հայտարարել, կարող էր հինգերորդ անգամ առաջադրվել քաղաքապետի թեկնածու, եթե Հայաստանի հանրապետական կուսակցությունը նպատակահարմար գտներ, բայց ՀՀԿ-ի մարզային ու շրջանային կառույցներն այլ թեկնածուի վրա կանգ առան: Նելսոն Ոսկանյանը դա նորմալ երեւոյթ է համարում, սերնդափոխությունը՝ անհրաժեշտություն:



Եթե չէր խոչընդոտում աշխատողին, նախածեռնողին:

Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ խոհեքով, եզրահանգումներով ու ծրագրերով է Նելսոն Ոսկանյանը հեռանում քաղաքապետարանից:

– Պարո՛ն Ոսկանյան, փորձե՞ք համառոտ կերպով ամփոփել Ձեր տասնչորսամյա գործունեությունը:

– Նախեւառաջ շնորհակալություն եմ հայտնում բոլորին՝ Գորիսի համայնքի բնակիչներին, հիմնարկներին, կազմակերպությունների ղեկավարներին, բոլոր ընտրաշրջանների ավագանու անդամներին, Գորիսում գործող հասարակական-

քաղաքական ուժերի ղեկավարներին, լրատվամիջոցներին՝ երկարամյա համատեղ աշխատանքի համար: Ունեցել եմ եւ հաջողություններ, եւ չիրագործված ծրագրեր, բայց միշտ ու բոլոր դեպքերում անկեղծ եմ եղել իմ քաղաքի հանդեպ: Պետական մարմինների, ՏԻՄ-ին ենթակա կառույցների հետ հարաբերություններում առաջնորդվել եմ պետական շահով ու պետական մտածելակերպով:

Այդ ընթացքում համայնքային բյուջեյ տարեկան 130 մլն դրամից հասել է 502 մլն դրամի, որի ազատ մնացորդը՝ 81 մլն դրամ:

Անցած ժամանակաընթացքում

Գորիսում հասանք շուրջօրյա ջրամատակարարման: Քաղաքի ներքին ջրատար ցանցի 60 տոկոսը հիմնադրոգվեց: Վերանորոգվում են օրվա կարգավորիչ չորս ջրամբարները: Այդ ամենը՝ մոտ 3 մլն դոլար ներդրումով:

Կարգավորվեց քաղաքի ոռոգման ցանցը, կառուցվեց 12 կմ երկարությամբ մոր ցանց: Ինքնեղ գիտեք, որ տնամերձ հողամասեր ունեցող Գորիսում որքան կարելու է ոռոգման համակարգի ամխափան գործունեությունը հատկապես անուան ամիսներին:

Բարելավվեց ներհամայնքային ճանապարհների վիճակը, ասֆալտապատվեց 6.7 կմ ներհամայնքային ճանապարհ, չորս բակ, ճանապարհների ճշգրտմանն ուղղվելու և արտաքին ազդանշաններով կարգավորվեց տրանսպորտային միջոցների երթուղիները:

Մոտ 900 մլն դրամ ներդրումով հիմնադրոգվում է Գորիսում անցնող միջպետական ճանապարհը՝ մայթերով: Այդ ծրագիրը մեկնարկել է երկու տարի առաջ եւ կավարտվի մինչեւ տարեվերջ:

Քննարկվող ժամանակաընթացքում վերակառուցվեց Գորիսի հիվանդանոցը՝ վերագինվելով արդիական սարքավորումներով:

Կառուցվեց եւ գործարկվեց սրտաբանական հիվանդանոցը, որ անմախաղեպ երեւոյթ է ոչ միայն Սյունիքում, այլեւ Լեռնային Ղարաբաղում:

Գորիսի երբեմնի ինստիտուտը ստացավ պետական համալսարանի կարգավիճակ:

Կառուցվեց երեք սոցիալական ՇԱՐՈՒՆԱՎԿԻՑՅՈՒՆԸ ԷՃ 6

ԼԵՈՆԻԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Հակառակորդին պիտի ցույց տրաւ, որ ոչ միայն բանակն է ամուր, այլեւ թիկունքը»

Բանակաշինություն

ՍԿԻՉԲԸ ԷՃ 1

Ծեռնամուխ են եղել արձանագրված թերությունները շտկելու: Բացի դրանից, զորահավաքի ընթացքը վերահսկվում էր մարզային իշխանության կողմից, եւ ի հայտ եկած որոշ խնդիրների տեղում լուծում էր տրվում: Ամենակարեւորը զինապարտներին անհրաժեշտ հոգեբանական պատրաստվածության հասցնելն էր եւ նրանց մեջ այն համոզմունքն ամրակայելը, որ անհրաժեշտ պահին պետք է ամեն ինչ մի կողմ դնել եւ մասնակցել պետության պաշտպանության գործին: «Թող այն տպավորությունը չստեղծվի, որ բոլորը մի մարդու նման՝ պատրաստակամ, եկան ու ասացին՝ մենք ներկայացել ենք, բայց զգացվում է, որ չափերն այն մոտեցումն ունեն, որ իր եւ իր ընտանիքի անվտանգությունը նախ ինքը պիտի պաշտպանի», - ասում է զինկոմը:



համեմատելով նախորդ զորավարությունների ցուցանիշների հետ՝ Լ.Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց Կապանի եւ Քաջարանի քաղաքապետներին, քաղաքապետարանի աշխատակիցներին, «Ձանգեզուրի պղնձամուխիբեմային կոմբինատ» ՓԲ ընկերությանը, «Դանդի փրիշա մեթալս Կապան» ՓԲ ընկե-

րությանը, «Գազպրոմ-Արմենիա» Սյունիքի գազամատակարարման եւ գազիֆիկացման մասնաճյուղին, «Հայաստանի էլեկտրացանցեր» Տաթև մասնաճյուղին, «Հայաստառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղին, մյուս կազմակերպություններին՝ զորավարությունների կայացմանը նպաստելու համար: «Ովքեր մեզ հետ կարողացել են ներդաշնակորեն աշխատել», - այսպես ձեռակերպեց միտքը զինկոմը: Մնում է ավելացնել, որ նախքան զորավարությունը Կապանի մշակույթի կենտրոնում խորհրդակցություն էր անցկացվել համայնքների ղեկավարների, համատիրությունների նախագահների, շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ, որի ընթացքում ճշտվել էր յուրաքանչյուրի անելիքը:

Ձինկոմիսարիատների վրա է դրված նաեւ ռազմական ուսումնարանները կադրերով ապահովելու խնդիրը: Պատեհ առիթը բաց չթողցինք զինկոմից հետաքրքրվելու, թե արդյոք պատանիները պատ-

րաստականություն հայտնում են սովորելու ռազմական ուսումնարաններում, դառնալու կադրային սպաներ: Լեոնիդ Գրիգորյանի փոխանցմամբ՝ ռազմական մասնագիտություն ստանալ ցանկացողների թիվն այս տարում փոքր-ինչ աճել է, բայց նրանց մեջ կային այնպիսիք, ովքեր առողջական ինչ-ինչ խնդիրներ ունեին, ինչը խոչընդոտել է զինվորական դառնալու նրանց մտադրությանը: Տխուր իրողություն է՝ երիտասարդների մի մասը բավարար ֆիզիկական պատրաստություն չունի: Սա, ցավոք, վերաբերում է նաեւ նրանց, ովքեր սահմանադրական պարտքը պիտի կատարեն հանրապետության զինված ուժերում:

Հունիսի 10-ից մեկնարկում է հայոց ազգային բանակի գարնանային բարձրագույն գործընթացը: Այս պահին զինկոմիսարիատում վերջին նախապատրաստական աշխատանքներն են կատարվում նորակոչիկների առաջին խումբն ուղարկելու հանրապետական հավաքակայան: Ձրույցի ավարտին զինկոմը զինակոչիկներին խաղաղ ու անվտանգ ծառայություն մաղթեց, նրանց ծնողներին՝ համբերություն: Նաեւ համոզումը հայտնեց, որ գարնանային այս զորակոչը եւս զինկոմիսարիատը հաջողությամբ կանցկացնի՝ կատարելով պլանային առաջադրանքը:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆ

Խորեք

Մայիսի 20-21-ը Կապանի քաղաքապետարանում տեղի ունեցած նիստերի արդյունքում ստեղծվեց համայնքի ղեկավարին կից համայնքի խորհուրդ: Խորհրդի կազմը ձեւավորվեց քաղաքում գործող հասարակական կազմակերպությունների եւ տարբեր ոլորտների ներկայացուցիչներից, իսկ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներն ընդգրկվեցին խորհրդի կազմում՝ առանց ծայրի իրավունքի: Խորհրդի նախագահ ընտրվեց Ռուդիկ Գրիգորյանը: Քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի խոսքով՝ Կապանում հանրային խորհուրդ ստեղծելու անհրաժեշտություն կար, ինչը կնպաստի հասարակության եւ իշխանության միջեւ կապի ամրապնդմանը:

Կապանի մշակույթի կենտրոնի կինոդահլիճում մայիսի 28-ին «Վորլդ Վիժն» Կապանի տարածքային զարգացման ծրագրի գրասենյակը հանդիպում էր կազմակերպել ներկայացնելու վերջին հինգ տարվա գործունեությունը եւ նախանշելու առաջիկա հնգամյակի անելիքները եւ գործընկերների հետ համագործակցության ուղիները: Դրանց մասին ծավալուն զեկուցմամբ հանդես եկավ Կապանի տարածքային գրասենյակի ղեկավար Վարդան Իվանյանը: Ելույթներով հանդես եկան ծրագրի հետ համագործակցող կազմակերպությունների ներկայացուցիչները: Սյունիքի մարզային զարգացման ծրագրի ղեկավար Էմմա Կաջոյանը ներկայացրեց միջազգային կազմակերպության 2015-2019 թվականների ռազմավարական ուղղությունները: Հայտնվեց, որ այսուհետ ծրագիրն աշխատելու է Կապան քաղաքի եւ տասը գյուղական համայնքի հետ, ընդ որում՝ խոցելի եւ անենախոցելի շերտերի հետ: Միջոցառման սկզբում ցուցադրվեց տեսաֆիլմ, որն արտացոլում էր հեռավոր գյուղերի վիճակը, հիմնախնդիրները:

Հունիսի 1-ին երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ Կապանում միջոցառումները մեկնարկեցին Գարեգին Նժդեհի հրապարակից, որտեղ «Պարային կոմպոզիցիայով» հանդես եկան մշակույթի կենտրոնի պարի խմբերը: Այնուհետեւ կավճանկարչության մրցույթ անցկացվեց մշակույթի կենտրոնի հարակից հրապարակում: Կազմակերպվեց շախմատի եւ շաշկու մանկական առաջնություն, իսկ մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում մանկական ֆիլմի ցուցադրություն: Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգում անցկացվեցին սպորտային խաղեր: Միջոցառումները եզրափակվեցին համերգային ծրագրով, որը հովանավորեցին Կապանի քաղաքապետարանն ու «Վորլդ Վիժն» ԲԿ Կապանի տարածքային զարգացման ծրագրի գրասենյակը: Քաղաքապետարանի նախածեռնությամբ մանկական զբոսայգու կարուսելներն այդ օրը գործում էին անվճար:

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված հունիսի 2-ին Կապանի Ա. Շիրվանզադեի անվան պետատրոնի դահլիճում Կապանի արվեստի մանկական դպրոցի սաները բեմադրեցին «Մկնիկ հարսնացուն» երաժշտաթատերական ներկայացումը, որն աշխուժության եւ բերկրանքի պահեր պարզեց փոքրիկ հանդիսականին:

Այս տարի Սյունիքի մարզում դպրոցին հրաժեշտ տվեց 1314 շրջանավարտ:

Մարզի գյուղեր

Գորայքում զարգացման նոր հեռանկարներ են բացվել

ՍԿԻՉԲԸ ԷՅ 1

որ կամավոր սկզբունքով հնարավոր չէր իրականացնել այդ քաղաքականությունը, ծայրամասեր էին աքսորում աղանդավորներին: 20-րդ դարի սկզբին հեղափոխական բախումների և քաղաքական այլ պատճառներով մոլորկաններն աստիճանաբար լքեցին Բազարչայը՝ իրենց տները համընկելով հայերին: Այստեղ բնակություն հաստատեցին հայթուրքական ընդհարումներից տուժած հայկական տարբեր գյուղերի բնակիչներ: 1950-ական թվականներին մոլորկանները վերջնականապես լքեցին Բազարչայը՝ թողնելով իրենց նախնիների գերեզմանների ռուսական տապանագրերը: Ներկայումս Գորայքն ամբողջովին հայաբնակ է:

ԳՈՐԱՅՔ ՅԱՄԱՅՆԸ

2010թ. հոկտեմբերին 33 հողային օրենսդրության մեջ կատարվեցին որոշակի փոփոխություններ, եւ Գորայքը դարձավ 33 այն բացառիկ գյուղերից մեկը, որն ունի հողային մեծ ռեսուրսներ: Ներկայումս գյուղի վարչական տարածքը կազմում է 21.700 հեկտար, որից 1900 հա վարելահող, 900 հա խոտհարք, 14.700 հա արոտավայր: Գյուղը մի կողմից սահմանակից է Վայոց ձոր մարզին, մյուս կողմից՝ ԼՂՀ-ին: 3ողային հաշվեկշռում փոփոխություններ կատարելու արդյունքում միավորեցին 6 գյուղական համայնքների հողերը, որոնց մեջ էին մտնում նաեւ մոլորկանների հեռանալուց հետո կառավարության որոշմամբ հայերին տրված հողերը: Ներկայումս օգտագործվում է գյուղի հողային ֆոնդի 40%-ը, բայց տարեց-տարի հատկապես արոտավայրերի օգտագործման աճ է նկատվում: Սիսիանի եւ Գորիսի շրջանի գյուղական համայնքների հոտերին հիմնականում հունհիս-սեպտեմբեր ամիսներին արոտավայրեր են տրամադրվում վարձակալությանը՝ 1 հա-ի համար միջին հաշվով 2250 դրամ: Գյուղապետն իրավունք ունի առանց միջնորդ կազմակերպության, ուղղակիորեն պայմանագիր կապել արոտավայրի շահառուի հետ: Վերջերս հուշագիր էր ստորագրվել Այունիքի արոտավայրերն իրանական կողմին վարձակալությանը հանձնելու մասին, որը, սակայն, ինչպես ժամանակը ցույց տվեց, իրականություն չդարձավ, մինչդեռ գյուղապետը հավաստում է. «Գորայքի տարածքի հողերի մի մասը՝ որպես արոտավայր, պարսիկների կողմից օգտագործելուն այն ժամանակ ղեմ չէի, քանի որ մեր տարածաշրջանից արոտավայր վարձակալելու ցանկացող գրեթե չկար: Գորիսի շրջանից ընդամենը 5 հոտ էր գալիս, որ, վարձակալելով 100 հա տարածք, վճարում էր 500 հա: Ներկայումս մեր արոտավայրերը բավականացնում են Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջանի հոտերին ու նախիրներին: Շուտով վարձակալությանը 700 հա արոտավայր տրամադրելու պայմանագիր պիտի կապենք ԶՊՄԿ-ի հետ: Կարծում եմ՝ այսքանով հանդերձ մեր արոտավայրերը հագիվ բավականացնեն մեր պահանջները»:

պատմական Բազարչայ գյուղին, ապա անասնապահությունը կարելի է համարել այդ գյուղի խորհրդանշաններից մեկը: Ժամանակին Բազարչայ գյուղն արտադրում էր այնքան կաթ, որքան Վայքի շրջանի բոլոր գյուղերը միասին, իսկ 3այրենական մեծ պատերազմի տարիներին Շղուկ եւ Գորայք գյուղերը մտավ եւ կաթնամթերքով օժանդակել են բանակին: Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների լայնածավալ մշակում գրեթե չկա. «Գյուղացին հողից օտարվել է եւ բավարարվում է միայն բնության տվածով: Դրան նպաստող գործոններ շատ կան, ինչպես ասենք՝ բնակչիմայական պայմանները, սերմի տեսակների ոչ բերքատու եւ ոչ դիմացկուն լինելը, գյուղացու անվճարունակությունը»:

Այժմ գյուղում կա 2000 խոշոր եղջերավոր անասուն (խորհրդային տարիների վերջին շրջանում՝ 1500), մանր եղջերավոր՝ 1700-1800: Անասունների գլխաքանակը հիմնականում ավելացել է այն պատճառով, որ գյուղացին շահավետ գտնվող չի կարողացել մթերել միսը: Կաթի մթերման խնդիր գյուղացիները գրեթե չունեն, քանի որ ենթաշրջանում կան կաթի հավաքման եւ մշակման մի քանի կայաններ. «Մեկ լիտրը 150 դրամով են տանում, առավել խոշոր մթերող է «Աշտարակ կաթ» ընկերությունը, որն օրական 10-12 տոննա կաթ է մթերում: Մսի մթերումը հիմնականում կատարվում է եզդիների կողմից. գառան միսը տեղում գնում են 2200 դրամով: Կապանի նորակառույց սպանդանոց առայժմ ոչ մի գյուղացի ոչխար չի տարել, քանի որ ծանապարհը երկար է, եւ կենդանին կորցնում է իր քաշը, բայց շահավետ պայմանների առաջարկման դեպքում հնարավոր կլինի»:

Տարվա այս ժամանակահատվածում, երբ նախիրներն ու հոտերը տեղափոխում են արոտավայրեր (յայլաղներ), հավանական է նաեւ անասունների շրջանում տարափոխիկ հիվանդությունների տարածումը: Գյուղապետի հավաստմամբ՝ ներկայումս հիվանդությունների տարածման որեւէ լուրջ վտանգ չկա, բայց գյուղի անասնաբույժն ունի լիազորություն՝ ստուգելու տարածք մտնող անասունները, եւ հիվանդության հայտնաբերման դեպքում թույլ չտալ դրանց մուտքն արոտավայրեր:

Խոսելով գյուղի զարգացման համար հեռանկարային ծրագրերից՝ գյուղապետը նշեց. «Գյուղում հնարավորություն կա ձկնարդյունաբերությունը զարգացնելու: Կարծում եմ՝ պետությունը կամ էլ առանձին անհատներ կօգտագործեն այդ հնարավոր շահութաբերությունը»:

Արվա-Սեւան ջրատար թունելի շինարարությունն ավարտելուց հետո գյուղն աստիճանաբար սկսեց դատարկվել, բայց ներկայումս բնակչության թվի աճ է նկատվում: Գորայքի բնակչությունը 2005-2008թթ. համեմատ աճել է. ներկայումս գյուղում ապրում է 504 մարդ, որ կազմում է 114 ընտանիք: Դպրոցն ունի 76 աշակերտ: Այս տարի դպրոցը տվել



է 4 շրջանավարտ, իսկ նոր ուսումնական տարում առաջին դասարան կհաճախի 6 աշակերտ: Ամեն տարի 12-13 նորածնի ծննդ է լսվում գյուղում, որից յուրաքանչյուրին համայնքի բյուջեից 50 հազար դրամ գումար են տալիս, իսկ նորապսակներին՝ 100 հազար դրամ: Դպրոցին կից գործում է նախակրթարան, որտեղ հաճախում է 2.5 տարեկանից բարձր 26 սան:

ՅԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Եթե գյուղապահպանությունն օրակարգային է շատ համայնքների համար, ապա Գորայքը, բազում խնդիրներով հանդերձ, հստակ քայլերով առաջ է շարժվում: Հիմնովին պիտի բարեկարգվեն կոյուղին, ներքին ջրատար ցանցը, փողոցները պիտի ասֆալտապատվեն: Նախատեսվում է վերանորոգել գյուղի մշակույթի պալատն ու գյուղապետարանի շենքը: Գյուղի փողոցները պետականորեն ամվանակոչվել են Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների անուններով՝ Սերգեյ Գրիգորյան, Բաբկեն Վարդանյան (կենտրոնական փողոց), Խաչիկ Աբգարյան, Հրաչ Կարապետյան, Սամսոն Սամսոնյան, Արթուր Սարուխանյան: Գյուղի նախկին խանութի շենքի տեղում նախատեսվել են երիտասարդների համար ժամանցի կենտրոն կառուցել, որի նախագծանախահաշվային աշխատանքներն արդեն ավարտվել են:

ՀՀ տնտեսության զարգացման մեջ նոր ճյուղ է փոքր հեկտերի կառուցումը, որից ամենասն չի մնացել նաեւ Գորայքը: Այս պահի դրությամբ Գորայքի տարածքում կա 2 գործող հեկ, 1 հեկի կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են, եւ նախատեսվում է կառուցել եւս 5 հեկ: Գորայքից հեկերում աշխատում է 4 հոգի, հեկերի շինարարական աշխատանքներին գյուղացիները մույնպես ներգրավվում են: Որպես եկամուտ՝ համայնքային բյուջեին տրվում է միայն հողի վարձավճար (736 հա)՝ տարեկան ընդամենը 1 մլն 700 հազար դրամի չափով, որ նախկինում կազմել է 6.5 մլն դրամ: Մեր օրերում համայնքների խոշո-

րացման մասին այդքան քննարկվող հարցի վերաբերյալ գյուղապետն ունի իր հստակ դիրքորոշումը. «Համայնքների խոշորացումը, կարծում եմ, դրական ոչ մի փոփոխություն չի կարող տալ: Մենք դեռ պատրաստ չենք քաղաքակիրթ ընտրություններ անցկացնելու, եւ որ թեկնածուն ավելի մեծ բարեկամական կապեր ունենա, նա էլ կընտրվի, եւ, բնական է, ավելի շատ կզարգացնի իր ծննդավայր-գյուղը: Բացի դրանից՝ կվերանայնան նաեւ մի շարք գյուղական ավանդույթներ: Մյուս կողմից՝ «Գեոթիմ» ընկերությունը նպաստավոր պայմաններ է ստեղծել տարածաշրջանի գյուղերի զարգացման համար: Ըստ կառավարության նախագծի՝ Գորայք, Սպանդարյան, Սառնակունյաց, Շղուկ գյուղական համայնքները պիտի միավորվեն, եւ եթե «Գեոթիմ»-ի ծրագիրը չլինի, ապա այդ միավորումը ցանկալի արդյունք չի կարող տալ, քանի որ 4 գյուղական համայնքի բյուջեն չենք գումար է, որով գրեթե ոչինչ հնարավոր չի անել»:

ՅԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

«2005թ., երբ ընտրվեցի Գորայքի գյուղապետ, համայնքն ուներ 64 մլն դրամ ապառք: 2010թ. «Գույքահարկի եւ հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ մինչեւ 2008թ. ապառքները հանվեցին, մնաց 28 մլն դրամ, այս պահի դրությամբ ունենք մոտ 21 մլն դրամ ապառք: Ճիշտն ասած, բավական ջանքեր են պահանջվում գյուղացիներից հարկերի հավաքման գործը հունի մեջ գցելու համար», – խոստովանում է գյուղապետը:

2014թ. համայնքի բյուջեն կազմել է մոտ 200 մլն դրամ: Այս տարի համայնքային բյուջեից դպրոցի վերանորոգման համար տրամադրվել է 17 մլն դրամ, 1 մլն դրամ՝ գրադարանի տանիքը վերանորոգելու համար, 1.2 մլն դրամ փոխանցվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային՝ երեխաների հետ ֆուտբոլի պարապմունքներ անցկացնելու համար: Ամեն տարի համայնքային բյուջեից գումար է հատկացվում երեխաներին

ճամբար տանելու համար: Նախորդ տարի «Գեոթիմ»-ի հետ համատեղ գյուղում փորձնական 2 ջերմոց սարքեցին, որը տվեց ցանկալի արդյունք: Այս տարի 8 ջերմոց սարքեցին, որի համար 100 հազար դրամ ներդրում է գյուղացին, 30 տոկոս համայնքը, իսկ մնացած գումարը՝ «Գեոթիմ» ընկերությունը:

Առհասարակ նախկինում համայնքային բյուջեով գրեթե ոչ մի հարցի հնարավոր չէր վերջնական լուծում տալ, քանի որ բյուջեն կազմում էր ընդամենը 5-6 մլն դրամ: Համայնքային բյուջեի, ԶՊՄԿ-ի ներդրումներով եւ Այունիքի նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի աջակցությամբ համայնքում սկսեցին կատարվել որոշակի աշխատանքներ: Իրավիճակը, սակայն, փոխվեց, երբ 2005թ. «Գեոթիմ» ՓԲԸ-ն սկսեց երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարել Ամուլսարում. կազմակերպության հետ համագործակցությունը նպաստեց համայնքում մի շարք հիմնական դիրքերի լուծման: Ներկայումս ՀՀ սոցիալական քաղաքականության հիմնադրամի եւ համայնքային բյուջեի միջոցներով վերանորոգման աշխատանքներ են կատարվում Գորայքի միջնակարգ դպրոցում (6.5 մլն դրամ՝ համայնքային բյուջեից, 6.5 մլն դրամ՝ Սոցիալական քաղաքականության հիմնադրամից): Ծրագիրը չէր ներառում դպրոցը ջերմոցման համակարգով ապահովելու հարցը, որը, սակայն, 17 մլն դրամ համայնքային բյուջեի ներդրման շնորհիվ կլուծվի: 2014-15 ուստարին աշակերտները կդիմավորեն դպրոցի վերանորոգված շենքում:

ՅԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐՊՐՈՒՆԵՐ

«Գեոթիմ» փակ բաժնետիրական ընկերությունը հայկական երկրաբանահետախուզական կազմակերպություն է, որի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Լիդիան ինթերնեյշնլին, որ միջազգային շուկայում գործող հանքերի հետախուզմամբ ու մշակմամբ զբաղվող խոշոր բրիտանական կազմակերպություն է: ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՅ 8

Գորիս. Ե՛՛ Եղավ որոտ, Ե՛՛ ձայներ, Ե՛՛ փայլափայլում, Ե՛՛ երկրաշարժ

Նախնահայերեն

Անշուշտ, կարելի էր ել անհրաժեշտ էր այնպես անել, որ Գորիսի քաղաքապետի ընտրության նախօրեին տեղի ունեցած վերադասավորումներն ու սրբագրումները չդիտվեին իբրև գործող մարզպետի ֆիասկո: Դրա համար մարզպետն ի սկզբանե պետք է հրապարակավ ընդուներ պետական այրին պատշաճող պարզագույն գործելակերպ՝ «Բոլոր թեկնածուներն իմն են, ես եմ ազատ եւ օրինական ընտրության երաշխավորը, իսկ կաշխատեմ այն քաղաքապետի հետ, ում նախապատվություն կտա ընտրողը»: Մինչդեռ... Հայտնի ներքինիների եւ նախնային խմբակն այնպես արեց, որ մարզպետը հերթական անգամ ծախսողվի ու ավելի կախյալ վիճակում հայտնվի (դրանից առաջ էլ այդ խմբակը գործող մարզպետին քանիցս օգել էր անհարմար վիճակի մեջ): Եվ Վահե Հակոբյանը հայտարարեց, որ իր թեկնածուն այսինչն է, քանի որ նա իր ընկերն է: Եվ փորձեց պետական մեքենայի գործարարը իր թեկնածու ընկերոջ շահերը պաշտպանել նաեւ այն բանից հետո, երբ հարազատ կուսակցության շրջանային ու մարզային խորհուրդներն արդեն իսկ որոշում էին ընդունել ոչ իր թեկնածուի օգտին:



Իհարկե, Վահե Հակոբյանի ծրագիրը մայիսյան ծյունի պես շատ արագ հալվեց. այդ էլ որերորդ անգամ նա դեմ առավ իրողության, երբ փողը որոշիչ դեր չէր կարող խաղալ: Բայց... Պալատական ներքինիներն ու նախնային խմբակները մեջ են: Պատահական չէ, որ առավել պապողան մի բանասեր կանգնեցրող անգամ արդեն, առաջին բաժանից հետո, հայտարարում է՝ «Մարզպետը ես եմ»:

Իսկ բուն Գորիսում... Գորիսում տասնյակ արժանավորներ կային, որ կարող էին առաջադրվել քաղաքապետի թեկնածու եւ ստանալ ընտրողների մի պատկանելի մասի աջակցությունը: Սակայն այդ մար-

դիկ այնքան լուրջ վերաբերվեցին Գորիսին... Պատասխանատվության զգացումը, քաղաքի առջեւ ծանաջած հիմնախնդիրների բարդությունը թույլ չտվեցին, որ նրանք առաջադրվեն հենց այնպես՝ հանուն առաջադրման: Եվ ճիշտ արեցին. ի վերջո չարժեք քաղաքապետի թեկնածու առաջադրվել միայն այն բանի համար, որ հետագա ժամանակներում սեփական անվանը կպցրած ունենային «Գորիսի քաղաքապետի նախկին թեկնածու» վերջերս շատ մոդայիկ դարձած հորջորջումը:

Եվ, այնուամենայնիվ, մի քանի հոգի առաջադրվեցին, ինչը նույնպես բնական պիտի համարել, անգամ՝ ողջունելի: Ազնիվ չէին միայն ոմանց հայտարարությունները, թե այս կամ այն թեկնածուն վայելում է գորիսեցիների 80 տոկոսի համակրանքը:

Ձավեշտական էր ոմանց խելակուրուս տվայտանքը՝ ինչ-որ մարդկանցից հուճեցելու գորիսյան լիդերի տեսիլը: Անբնական էր, որ ծրագրերի, գաղափարների մրցույթի փոխարեն ոմանք հաթաթա էին տալիս սրան-նրան: Բարոյական չէր, որ նախորդ 20-30 տարում Գորիսից մեծ-մեծ պատառ թռցրած, Գորիսի ավանդական արժեքները փորձում էին կույսի կեցվածք ընդունել եւ առաջինության կերպարանք: Մի ուրիշ ցավ էլ կար. քաղաքապետի ու քաղաքապետարանի դերն այնքան ենք իջեցրել, որ տեղից վեր կացողն իրեն հավանական քաղաքապետ էր համարում: Շատ ցավալի է, որ ոմանք էլ իրենք Գորիսի քաղաքապետի ղեկավարները էին համարում միայն ու միայն

անհեթեթ հայտարարություններով եւ մարդկանց պիտակավորելու մոլեռանդությամբ: Իհարկե, նա պարտավոր էր լինել իր մերձավորի կողքին, ով քաղաքապետի թեկնածուներից մեկն էր. ողջամիտ չէր դրա համար նրան քննադատելը: Բայց նա բարոյական իրավունք չուներ իր քաղաքի ընտրողների առնվազն մի մասին անվանելու տգետներ: Նա բարոյական իրավունք չուներ ընտրական գործընթացն անվանելու պայքար՝ ընդդեմ հին ռեժիմի, մոռանալով, որ ինքն էլ հնագույնը բոլոր հնեների մեջ: Նա չպետք է մոռանար, որ գորիսյան արգահատելի բարքերի մեջ իր հետքն անգուզական է ու անջնջելի: Բոլոր դեպքերում նա պետք է խոնարհված մնար գորիսեցու առջեւ, ով մոտ քսան տարի ծով համբերությամբ հանդուրժել է իրեն եւ երբեք Գորիսի պետական համալսարանը չի կոչել տգիտության դարբնոց:

Հիմա, կարծեք, կրթերը հանդարտվել են: Եվ մարդիկ մեկ այլ հարց են քննարկում՝ այդ ինչպե՞ս պատահեց, որ մինչեւ վերջին շունչը կովել-պայքարելու ելած թեկնածուները մի ակնթարթում հետ կանգնեցին ընտրամարտոնից: Հո չէ՞ն ասի, թե ճնշում է գործարկվել վերելից կամ կողքից: Իսկ եթե իրոք ճնշում է գործարկվել, ապա ուրեմն ճնշելու տեղ է եղել, ինչի համար եւ նախնային խմբակները հիմադրության են նախնային խմբակները: Իսկ եթե ճնշելու տեղ է եղել, ապա արժե՞ր դուրսգալի կեցվածք ընդունել, արժե՞ր Գորիսի ճաք տված համերաշխությունը մեկ անգամ եւս շաղահարել, մանավանդ որ բոլոր շահարկումների ու կռիվների հետ իրական Գորիսը որեւէ կապ չուներ:

Գորիսի նորընտիր քաղաքապետը, կարծում ենք, պետք է հանգամանորեն վեր լուծի նախընտրական ամբողջ անցուղարձը, ուսումնասիրի հանրային տրամադրությունները եւ դրանից բխող ու հանրային համերաշխությանը միտված քայլեր ձեռնարկի: Շատ վիրավորական կլինի, եթե նորընտիր քաղաքապետը քինախնդրությամբ վերաբերվի իր մրցակիցներին ու ընդդիմախոսներին, ինչն ընդունված գործելակերպ է մեր օրերում եւ հատկապես Այոնի քի մարզում: Առավել ամոթ կլինի, որ յուրաքանչյուրս (անգամ քաղաքապետի մյուս թեկնածուները) մեր կառավարությունների չափով չաջակցեցնորընտիր քաղաքապետին՝ ի շահ Գորիսի:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ների ու ստուգարանների օրերին ամեն մի ուսանողի առիթով հրամցվող. «...Ինչ անուն ենք, էրեխեքի համար ենք անուն»:

Դասախոսի այդ արտահայտությունը միգուցե մեղմացուցիչ համազանգեց համարե՞նք՝ նկատի ունենալով նրա աղավաղված վիճակը, եւ սովորական ժեստ՝ իր խոսքին հավատ ընծայելու համար... Բայց ուրիշի երեխաներին մտավոր հաշմանդամ դարձնելու հաշվին սեփական «էրեխեքի» հոգեբանը հոգալն ու բացե՞նք այդ մասին խոսելն առնվազն ցինիզմ է: Եվ ուրեմն պատահական չէ Գորիսում թեւածող խոսակցությունն առ այն, որ պետհամալսարանի ուսանողը հաճախ պարտադրված է լինում իմանալ, թե որ դասախոսի որ երեխան ինչ նախափորություններ ունի սննդամթերքի օգտագործման ոլորտում՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով:

Հողվածում փարիսեցիությունը դրսևորվում է աննախադեպ կատարելությամբ: Հողվածագիրը, մտավորականի, գրագետի, բարեպաշտի ու բարոյախոսի ծակ հովանոցը զվիավերելուն բռնած, պետության կայացման համար տառապալի կեցվածք է ընդունում՝ մոռանալով, որ պետության կայացմանը մեծապես կնպաստեինք, եթե կարողանայինք,

օրինակ, ընչաքաղաքությունը վերացնել բուհից, եթե կարողանայինք կիսագրագետ դասախոսներին դուրս վճռել բուհից:

Հողվածագիրն արձանագրում է. «Գորիսի պետական համալսարանում աշխատում է մտավորականության այն մասը, որի շնորհիվ Այոնիքի մարզը գիտության կենտրոնի համարում ունի»:

Իմիջիայլոց, վատ երազանք չէ, եւ, առնաաարակ, երազելը վատ բան չէ: Բայց... Այդ երազանքի համար անհրաժեշտ կլինի, որ Գորիսի պետհամալսարանի հայոց լեզվի դասախոսն առնվազն տիրապետի գիտելիքների այն պաշարին, որ սովորաբար տրվում է հանրակրթական դպրոցի ցածր դասարաններում:

Հողվածագիրը, սակայն, առավել տհաճությամբ է ընդունել մեր հրապարակման եզրափակիչ դրույթը. «Գորիսի նորընտիր քաղաքապետը, կարծում ենք, պետք է հանգամանորեն վերլուծի նախընտրական ամբողջ անցուղարձը, ուսումնասիրի հանրային տրամադրությունները եւ դրանից բխող ու հանրային համերաշխությանը միտված քայլեր ձեռնարկի: Շատ վիրավորական կլինի, եթե նորընտիր քաղաքապետը քինախնդրությամբ վերաբերվի իր մրցակիցներին ու ընդդիմախոսներին, ինչն ընդունված գործելակերպ է մեր օրերում եւ հատկապես Այոնիքի մարզում: Առավել ամոթ կլինի, որ յուրաքանչյուրս (անգամ քաղաքապետի մյուս թեկնածուները) մեր կառավարությունների չափով չաջակցեցնորընտիր քաղաքապետին՝ ի շահ Գորիսի»:

Եվ կարծում է, որ դա ցուցում-հիշեցման արդյունք է, որ դա անհաջող ընտրված «ոսկե միջին» է:

Ի դեպ, կրկին ստորագրում ենք մեր հրապարակման եզրափակիչ դրույթի տակ: Հայտարարում ենք նաեւ՝ որեւէ «լեռ-դասախոսի» շինծու բարոյախոսությանը կընդդիմանանք հնարավոր բոլոր միջոցներով, քանզի Գորիսի ներկա կացության, առկա խնդիրների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ մեր տեսակետն ունենք:

Ուզում ենք մեր խոսքի այս հանգրվանում էլ ժամանակավորապես դադար տալ Միեր Քունունցի հայտարարության քննարկմանը՝ մի քանի հարց պարզելու եւ քննարկումը վերակսելու միտումով:

Հարցերն ուղղում ենք Գորիսի պետական համալսարանի տնօրեն Յուրի Սաֆարյանին:

Նախ՝ ո՞վ է լեզվական նման սահմանափակ գիտելիքներով անձնավորությանը դասաժամեր տվել պետական համալսարան կոչվող

կրթօջախում, ինչպե՞ս է նա հայտնվել հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի ողջենտի պատվանդանին:

Ո՞ր հանձնաժողովն ու է՞րբ է այդ անձնավորությանն ատեստավորել եւ բուհում հայոց լեզու դասավանդելու իրավունք տվել:

Գորիսի պետական համալսարանի մի խումբ դասախոսներ խնդրել են «Այոնյաց երկիր» խմբագրությանը հրապարակել Միեր Քունունցի թեկնածուական ատեստատությունը եւ թերթի էջերում կազմակերպել այդ ատեստատության քննարկում՝ պարզելու, թե ինչ գրվածքի համար է նրան տրվել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Հետեւաբար՝ Դուք կարո՞ղ եք մեզ տրամադրել այդ ատեստատությունը:

Եվ, իհարկե, ամենազվախափորը՝ ո՞վ է լիազորել Միեր Քունունցին (եւ արդյո՞ք լիազորել է) հանդես գալ Գորիսի պետական համալսարանի անունից: Եթե իսկապես նա է լիազորված խոսել Գորիսի պետական համալսարանի անունից, ապա չենք կարող չբարձրաձայնել՝ Գորիսի պետական համալսարանն իրոք լիակատար ձախողանք է ապրում:

Եթե իսկապես նա է լիազորված խոսել Գորիսի պետական համալսարանի անունից, ապա կուզե՞նայինք հանրությանը հետաքրքրող մի քանի

հրատապ հարց ճշտել լիազորի օգնությամբ՝ կապված տարեվերջյան պետական քննությունների ու Գորիսում առաջիկա օրերին կայանալիք ու Գորիսի պետհամալսարանից որոշակիորեն ուղղորդող ընդունելության միասնական քննությունների հետ:

Այնպես որ, պարոն Սաֆարյան, այդ հարցում նույնպես խնդրում ենք Ձեր օգնությունը, թեւ Դուք նախաձեռնեցիք հեռախոսազրույցում հավատ չեղեցիք խոսքով հավաստիացրիք մեզ. «Հողվածն իմ պատվերով չի գրվել, եթե իմ պատվերով գրված լինեք, կամ մատու խառը լինեք, ապա այդքան անգրագետ, սխալներով եւ հիմարություններով լեցուն չէր լի մի»:

...Սույն հրապարակման վրա աշխատելիս քանիցս վերհիշեցինք եղիշե Զարեցի հայտնի գործը՝ «Կապկաթ թամաշան», որի մի քառատողի ուժով մեր փոքր հայրենիքի բարքերը ժամանակին ցուցանվել է Կովկասով մեկ՝ հիմքում դնելով ցիցերոնյան հայտնի բացականչությունը: Եվ որոշեցինք իբրեւ վերնագիր օգտագործել հենց այդ ստեղծագործության անվանումը՝ մտածելով, որ վերջ շարադրվածը նույնպես թամաշայի ու խորը մտահոգության արժանի է...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գորիս. Նախընտրական օրերի երազ



ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հասարակություն

Ապրիլի 23-ը ծննդյան օրն է, լրանում է 63 տարին: Այդ օրն աղջիկներիս հորդորով, ավելի ճիշտ՝ նրանց ճնշմամբ հագա տոնական կոստյումն, փողկապ կապեցի եւ գնացի դպրոց (ուսուցիչ եմ): Ինչ եւ աղջիկներիս ջանքերն իզուր էին, հագ ու կապ ոչ ոքի չհետաքրքրեց: Վերադարձված աշխատանքային ընկերներիս անտարբերությունից՝ ոչ ոքի ոչինչ չասացի: Վեցերորդ ժամից հետո, երբ ցանկանում էի տնօրենին խնդրել, որ թույլատրի մի քիչ շուտ տուն գնալ, ինքն ինձ կանչեց կաբինետ, «թաքուն» շնորհավորեց ու մի թուղթ դեմ տվեց՝ ստորագրելու: Սկզբից ստորագրեցի թուղթը ու հե

տո միայն կարդացի: Սա դեկավարին դուր գալու լավագույն միջոցներից է, փորձված ձեւ: Պարզվում է, սակայն, որ ես ստորագրեցի «ին դիմումի համաձայն» վաղվանից թոշակի անցնելու, աշխատանքից ազատվելու համաձայնությունը: Թոշակիս չափը՝ ամսական 30000 դրամ, այսինքն՝ օրական 1000 դրամ:

Եթե իմ թոշակի չափը որոշողը ծխող է, ու ինքն էլ հանկարծ թոշակի անցնի այդքան գումարով, ապա նա ուրիշներից մի գլուխ սիգարետ պիտի խնդրի, թոշակը չի հերիքի: Ակամայից ուրիշ համեմատություն էլ ես անում: Այդ գումարը չի հերիքի նրան՝ սանհիգիենիկ պարագաներ ձեռք բերելու համար:

Ներողություն համեմատության համար: Մի քիչ շեղվեցի: Բայց ինչ կարող ես անել, ախր մենք էլ մարդ ենք, չէ՞:

Տուն գալու համար թույլտվություն խնդրելու անհրաժեշտությունն ինքնին վերացավ: Իսկ տանն էլ ինձ չհաջողվեց գոնե ժամանակավորապես թաքցնել թոշակի անցնելու փաստը: Դա այնքան էլ շատ չազդեց մտերիմներիս վրա: Ավելին, նույնիսկ զավեշտի երանգներ հաղորդեց տոնական սեղանին: Կես-լուրջ, կես-կատակ փեսաս առաջարկեց քաղաքապետի ընտրությունում առաջադրվել

թեկնածու: Մի քանի բաժակից հետո հարազատներս սկսեցին այդ կատակը լրջորեն քննարկել: Ի վերջո որոշեցին, որ պետք է առաջադրվեմ: Մնում էր լուծել նյութական միջոցների հարցը: Միջոցներ կան՝ հայտարարեց փեսաս: Բանից պարզվում է, որ վերեւներում, ինչպես միշտ, «մտածել են այդ մասին»: Երեկ հանրապետության նախագահը հրամանագիր է ստորագրել՝ վերադարձնելու թոշակի անցնող ուսուցիչների ստեղծված ավանդները:

Ճիշտ որ՝ չկա չարիք առանց բարիքի: Այս գաղափարի կենսաց էլ խմելուց հետո ամեն ինչ պարզ ու հստակ է դառնում: Հաջորդ երկու օրվա ընթացքում փաստաթղթերս պատրաստում եւ ներկայացնում եմ եւ... ընտրվում:

Ես քաղաքապետ եմ: Հիմա տեղը ես եմ: Դե եթե տեղը ես եմ՝ բակլան խաշած եմ ցանում: Երդման արարողությունը դառնալու տեղափոխվում է քաղաքի կենտրոնական հրապարակ: Մի ձեռքս դնում եմ Սուրբ գրքին, մյուսը՝ նախընտրական խոստումների, այսինքն՝ քաղաքի զարգացման քառամյա ծրագրի վրա, որը բարձրախոսով կետ առ կետ հնչեցնում է հաղորդավարը: Յուրաքանչյուր միտք

արտահայտելուց հետո ես հայտարարում եմ՝ երզվում եմ:

– Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ուրբաթ օրը քաղաքապետարանի դահլիճում հանդիպում քաղաքի բնակիչների հետ: Քաղաքի կյանքին վերաբերող լավագույն առաջարկները կխորհրդակցեն նյութապետ:

– Քաղաքապետարանի (քաղաքապետի) ստացած նյութական միջոցների, նվերների հաշվին հիմնել հատուկ ֆոնդ՝ տաղանդավոր երեխաներին, նյութապետ կարիքավոր երեխաներին օգնելու համար:

– Երկու ամսվա ընթացքում արձատարեմ բարելավել քաղաքային տրանսպորտի աշխատանքը: Լրացուցիչ բացել երեք երթուղի: Պարտավորեցնել երթուղիները սպասարկող կազմակերպություններին, մասնավոր անձանց՝ ապահովելու ավտոբուսների աշխատանքը կիրակի եւ տոնական օրերին եւս: Տոնական օրերին քաղաքային տրանսպորտն աշխատում է ամբողջ օրը:

– Վերականգնել գեղեցիկ, կրկիկ, մաքուր քաղաքի համբավը: Վերացնել քաղաքի դիտակետերի շրջապատի աղբանոցները: Հանրապետության կառավարությունում բարձրացնել Վարարակն գետի

հունը մաքրելու, հենապատի կառուցումն ավարտելու՝ խորհրդային տարիներից գոյություն ունեցող ծրագիրը:

– Եկեղեցական տոներին հաջորդող օրերին քաղաքացիներին տրանսպորտային անվճար միջոցներ տրամադրել գերեզմանոցներ այցելելու համար:

Բարձրախոսից հնչող հաղորդավարի ձայնին խառնվեց ամբիոնի աջ մասում գտնվող հեռախոսի զանգի ձայնը: Ձեռքս մեկնեցի դեպի լսափողը: Ձեռքս կապվեց հեռախոսին, վայր ընկավ: Ձարթեցի: Երազ էր: Ափսոս...

Հ.Գ. Արտասահմանից ֆինանսավորվող եւ հանրապետությունում գործող տասնյակ գրասենյակներ խորհրդատվական ծառայությունների վրա միլիոնավոր դոլարներ են ծախսում: Ես ունեցողի եմ եղել մի դասախոսության, որի ժամանակ դասախոսը 45 րոպե շարունակ մեզ բացատրում էր, որ գոմաղը լավ պարարտանյութ է: Ախր դա մենք, մեր ապուպապերը վաղուց գիտեինք, ախր աշխարհը մեզանից է սովորել ցորեն ցանելը, ինչու չէ, մաե լավաշ թխելը: Բայց դասախոսության համար նա ստանում էր 6000, իսկ ես իմ վարած մաթեմատիկայի դասաժամի համար՝ 450 դրամ: Հիմա ինչ եմ ուզում ասել. երազի տեսքով իմ դասախոսությունը ծրի է, անվճար: Գորիսի նոր քաղաքապետը կարող է այն օգտագործել:

ՆԵԼՍՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ. «Զի բացառվում, որ լիազորություններս վայր դնեմ հունիսի 8-ի ընտրությունից անմիջապես հետո՝ չսպասելով վերջնաժամկետին՝ հուլիսի 20-ին»

ՍԿՈՒՐԸ ԷՏ 2

Զենք՝ 67 բնակարանով: Ընդունվեցին կառավարության մի քանի որոշումներ՝ Գորիսի մասնակցությունը: Կարելի էր հատկապես զբոսաշրջության մասին ընդունված որոշումը, երկար սպասված էր «Գորիս» քրեակատարողական հիմնարկը քաղաքի տարածքից հանելու որոշումը: Հիմա պետք է հետամուտ լինել դրանց կատարմանը:

Գորիսում նոր տեսք ստացավ հյուրանոցային տնտեսությունը. կառուցվեց 14 հյուրանոց կամ հյուրատուն՝ 603 տեղով:

Հաստատվեց Հին Գորիսի քաղաքաշինական կանոնադրությունը: Վերականգնվեց եւ 2013-ին վերածովեց Հին Գորիսի Սբ Հռիփսիմե եկեղեցին:

Շարունակվեցին նախորդ տարիներին ձեւավորված քաղաքային ավանդույթները: 2010 թվականին էլ հանրապետության նախագահի մասնակցությամբ ընկեց Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակը:

Վերաբացվեց երկրագիտական բանգարանը:

Ստեղծվեց Գորիսի քաղաքային պատկերասրահ:

Վերակազմակերպվեց Գուսան Աշոտի անվան համույթը, ստեղծվեց «Ձանգեզուր» պարի համույթը, վերաստեղծվեց «Ձանգեզուր-99» ֆուտբոլային մանկական ակումբը:

Գորիսի կենտրոնում վեր խոյացավ Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշակոթողը, նոր տեսք ստացան նրա ամուրը կրող հրապարակը, Մեծ հայրենականում գոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշար-

ձանի շրջակայքը (աշխատանքները շարունակվում են):

Գորիսում ստեղծվեց հայազիտական հետազոտությունների կենտրոն եւ այլն:

Շատ պարզունակ կլիներ, եթե այդ ամենը եւ նման շատ գործեր վերագրեի քաղաքապետարանին, այդպիսի մտադրություն չուներ: Դրանք համապետական մակարդակով, իշխանության տարբեր օղակների ջանքով, տարբեր ծրագրերի շրջանակում իրականացված գործեր են, որոնց իր լիազորությունների սահմաններում աջակցել է քաղաքապետարանը: Կարելիորն այն է, որ նշված գործերը կատարվել են Գորիսում՝ ավելի հարմարավետ, ավելի բարեկեցիկ ու ավելի գեղեցիկ դարձնելով մեր քաղաքը:

Մի քանի տեղեկություններ էլ, որ ավելի տեսանելի կդարձնեն համայնքի 14 տարվա ընթացքը:

Համայնքի բնակչության թիվը 2001-ին 23200 էր, 2011-ի մարդահամարին՝ 21 հազար: 2000թ. մանկապարտեզ էր համախուս 580 երեխա, հիմա՝ 903 երեխա:

2000թ. Գորիսի երեքնի չորս խոշոր ձեռնարկությունից ոչ մեկը չէր գործում, այժմ երեքը գործում է՝ 15-20 տոկոս հզորությամբ: Տեղաշարժեր կան քաղաքի տնտեսավարող մյուս սուբյեկտների գործունեության մեջ եւս:

– **Դեմ չե՞ք լինի, եթե արձանագրեմք, որ բոլոր այդ աշխատանքներին աջակցել է Սյունիքի մարզպետարանը:**

– Միանգամայն ճիշտ էք: Աշխատել եմ չորս մարզպետի հետ, ամենաերկարը՝ մոտ ինը տարի, Սու-

րեն Խաչատրյանի հետ: Նա, հիրավի, անգերազանցելի ներդրում ունի այդ տարիներին Գորիսում կատարված վերափոխումներում, իրականացված ծրագրերում: Այսօր էլ նրա նախաձեռնությամբ մի քանի ուշագրավ ծրագրեր են իրականացվում համայնքում:

– **Ամենադժվար իրավիճակներն անցած տարիներին, որ մնացել են Ձեր հիշողության մեջ:**

– Բնականաբար, եղել են շատ դժվարություններ, բարդ իրավիճակներ, որոնք հարթահարվել են: Դրանցից ոչ մեկը, սակայն, չէի կամենա առանձնացնել:

– **Ի՞նչը Ձեզ չի հաջողվել, որ հիմա ավստոսում եք:**

– Քաղաքային տնտեսության մեջ որդեգրել էինք տարեկան մեկ հիմնախնդիր լուծելու գործելակերպ՝ փողոցների լուսավորության կարգավորում, ջրամատակարարում, կանաչապատում, աղբահանություն... Բոլոր ծրագրեր, ցավոք, չիրագործվեցին: Նկատի ունեն հատկապես աղբահանության կարգավորման ծրագիրը, թեեւ իմ աշխատանքի ընթացքում ձեռք է բերվել աղբահանության երեք մեքենա: Չլուծվեց աղբավայրի հարցը: Չկարգավորվեց Վարարակնի հունի հարցը: Ծայրամասերը կուզեմայի ավելի բարելավող տեսնել, բայց չհաջողվեց: Ներհամայնքային ճանապարհների մայթերի խնդիրը շարունակեց մնալ ծայրահեղ վատ վիճակում: Եվ նման մի քանի այլ հարցեր...

– **Ավագանու հետ էլ, կարծեք, չստացվեց:**

– Միանշանակ չի կարելի այդպես

ասել, եւ ստացվեց, եւ չստացվեց որոշ դեպքերում: Վերջին ամիսներին մենք չկարողացանք ընդհանուր հայտարարի գալ 2013 թվականից մնացած 81 մլն դրամի օգտագործման հարցում, թեեւ բազմաթիվ խնդիրներ ունենք համայնքում լուծման կարոտ:

Ավագանու ինստիտուտը կայանալու համար դեռ ճանապարհ ունի անցնելու:

Ավագանու որոշ անդամներ, ցավոք, առաջնորդվում են անձնական ինչ-ինչ նկատառումներով:

Տարիներ շարունակ ավագանու անդամ եղած առանձին անձինք այդպես էլ չեն ուզում ծանոթանալ ՏԻՄ մասին օրենսդրությանը, ինչի համար եւ նրանց գործունեությունը սիրողական մակարդակից չի բարձրանում: Գրեթե չունենք օրինակ, երբ ավագանու անդամներն են նախաձեռնությամբ հանդես գալիս:

– **Ամիսներ առաջ Գորիսի քաղաքապետարանի հետ կապված երկու քրեական գործ էր հարուցվել: Մեկը վերաբերում է քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող անշարժ գույքի վաճառքի ընթացքում աճուրդները կազմակերպելուն, մյուսը՝ 2011-13թթ. Գորիսի քաղաքապետարանի հայտարարած մրցույթներին: Ո՞ր հանգրվանում է դրանց նախաքննությունը:**

– Նախաքննությունը դեռ շարունակվում է: Բայց, անկեղծ ասած, չէի ցանկանա այդ մասին հանգամանակից խոսել՝ անհարկի կրքեր չբորբոքելու համար: Թող նախաքննական մարմինն իր աշխատանքն ավարտի, հետո կանդիդատներն այդ գործին:

– **Ի՞նչ ուշագրավ ծրագրեր ունեիք այս տարվա համար:**

– Հուլիսի 20-ին Գորիսում կանցկացվի թի փառատոն. դա կլինի աննախադեպ միջոցառում, ինչին քաղաքապետարանը պատրաստվում է այժմվանից: Ունենք ծրագիր Հին Գորիսի Սբ Հռիփսիմե եկեղեցու շրջակա քարայրների եւ Սելիք Օհանի ապարանքի վերականգնման ու նպատակային օգտագործման վերաբերյալ: Ի դեպ, Սբ Հռիփսիմե եկեղեցուն նախկինում կատարված աշխատանքների զգալի մասն իրականացվել է Գորիս-Վիեն քաղաքների համագործակցության շնորհիվ: Նախատեսվող աշխատանքները նույնպես կկատարվեն այդ համագործակցության շրջանակում. ծրագիրը մշակել է «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունը:

– **Ի՞նչ կմտաբերեք նորընտիր քաղաքապետին:**

– Կցանկանամ լավ թիմ, ճիշտ գնահատել համայնքի կարիքներն ու հնարավորությունները, ճիշտ օգտագործել եղած ֆոնդերը, կարելիորեն համայնքի բնակիչներին համայնքային գործերի մասին իրազեկելը, խելամիտ գործել տեղեկատվական դաշտում:

Վաչագան Աղունցը մի քանի անգամ եղել է համայնքի ավագանու անդամ. դա արդեն իսկ նշանակում է, որ ինքը քաջատեղյակ է համայնքային կառավարման արակտիկային: Եվ ուրեմն՝ կցանկանամ, որ իր փորձով, գիտելիքներով, հանրության տարբեր խավերի հետ ճիշտ հարաբերություններով, գործնականությամբ ավելին անի Գորիսի համար, քանի ես եմ արել:

– **Իսկ ճշտել էք, թե ինչով եք զբաղվելու պաշտոնաթողությունից հետո:**

– Ունեն մասնագիտություն, դեկավարման փորձ... Չի բացառվում, որ լիազորություններս վայր դնեմ հունիսի 8-ի ընտրությունից հետո՝ չսպասելով լիազորություններիս վերջնաժամկետին՝ հուլիսի 20-ին (իրականում վերջնաժամկետ պիտի սահմանվեր օգոստոսի 17-ը): Ընտրված քաղաքապետի դեպքում մեկ-երկու ամսվա իմ աշխատանքը քիչ արդյունավետ կլինի:

Հարցազրույցը՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ԽՈՍՔ ՀԻՇՏԱՍԿԻ

Ռուզաննա Խարազյան



Անչափ դժվար, էթե չասե՞ք անկարելի է լինում, երբ հարազատ ու սրբամուտ մարդու մասին պիտի խոսես ու պարտես անցյալ ժամանակով: Կյանքը նաեւ իր դաժան անակնկալներն ունի՝ ոչ մի փրամաբանության մեջ չարեղավորվող: Եվ գուցե լսելիս թվում է, թե ճակատագրի քմահաճ խաղն է պարզապես, բայց... անդամալիտերն բախվում են դաժան իրողության հետ: Ցավոք, այդպես եղավ նաեւ այս անգամ:

Երկրային կյանքին անժամանակ հրաժեշտ է տվել վաստակաշատ բժշկուհի, Կապանի պոլիկլինիկայի ֆիզիոթերապեւտ, բժշկաստղալական փորձագիտական հանձնաժողովի փորձագետ Ռուզաննա Խարազյանը:

Ծնվել է 1954 թվականի օգոստոսի 7-ին Կապան քաղաքում: 1971-ին միջնակարգ ավարտելուց հետո ընդունվել է Կրասնոդարի բժշկական ինստիտուտը, որն ավարտել է 1979-ին: Աշխատանքային գործունեությունը սկսել է Կապանի բուժօժանկարում, որպես թերապեւտ, այնուհետեւ՝ արյան փոխներարկման կաբինետի վարիչ: 1992-ին վերապատրաստվելուց հետո նշանակվել է ֆիզիոթերապեւտիկ բաժանմունքի վարիչ:

2003-ից աշխատել է Կապանի բժշկական կենտրոնի պոլիկլինիկայում որպես ֆիզիոթերապեւտ: Այնուհետեւ տարածաշրջանային բժշկաստղալական փորձագիտական հանձնաժողովում մինչեւ կյանքի վերջը զբաղեցրել է փորձագետ-թերապեւտի պաշտոնը: Մարդկային որակների եւ պրոֆեսիոնալիզմի համար սիրված էր թե կոլեկտիվում, թե բնակչության շրջանում:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

Ռուզաննա Խարազյանի կյանքը պարկեշտության ու անմնացորդ նվիրումի օրինակ էր, նվիրում ընտանիքին ու հարազատներին, աշխատանքին ու ընկերներին: Եվ այդպիսին էլ կմնա հարազատների, մտերիների, ճանաչողների հիշողության մեջ: «Կապանի բժշկական կենտրոն»

ՊԲԸ

Գորայքում զարգացման նոր հեռանկարներ են բացվել

Սարգի գյուղեր ՍԿԶԲԸ ԷՏ 3

2005 թվականից Ամուլսարի տարածքում այս կազմակերպության կողմից սկսվել են երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնց համար Գորայքի արտավայրերից 1700 հա տարածք վարձակալությամբ տրամադրվեց կազմակերպությանը:

Նախապես կազմակերպությունը պայմանագիր կապեց Սյունիքի մարզպետարանի հետ, եւ հողի վարձակալությունից ստացված գումարը փոխանցվեց պետբյուջե: 2010թ. վարչատարածքային նոր բաժանումից հետո իրավիճակը փոխվեց. հողի վարձակալությունից ստացված գումարը փոխանցվեց համայնքային բյուջե: 242.5 հա հողի կատեգորիան փոխվեց արդյունաբերական հողի կատեգորիայով, որի 1 հա արժեքը 124.200 դրամ է:

Ամուլսարի տարածքում հայտնաբերվել է բազմամետաղային հանքավայր, բայց լինելու է միայն ոսկու կորզում: Այս տարիների ընթացքում տարածքները, որտեղ իրականացվել են հետախուզական աշխատանքներ, վնաս չեն կրել եւ անմիջապես կանաչապատվել են, իսկ հետագայում հանքավայրի շահագործման համար նախատեսված հողային տարածքները բաց են թողել: Մինչ այժմ կազմակերպությունը ստեղծել է 47 աշխատատեղ:

Ներկայումս աշխատանքները դադարեցվել են, քանի որ կազմակերպությունը սպասում է հանքավայրի շահագործման թույլտվություն ստանալուն: «Պետք է նշեն, որ այն տեխնոլոգիան, որ պիտի ներդրվի հանքավայրը շահագործելու համար, միանգամայն անվտանգ է, կորոնար կատարվելու է էկոլոգիապես անվնաս պայմաններում, ինչպես նաեւ տարածաշրջանը ապահովվելու է 500 աշխատատեղով: Պայմանագիրը նախատեսվում է կնքել 20 տարի ժամկետով, այսինքն՝ մինչեւ 2034թ. »:

Նշենք, որ վերջերս լրագրողների հետ հանդիպման ժամանակ ԴՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ծշմարիտյանն անդրադարձել է Ամուլսարի ներդրումային ծրագրին՝ հավաստիացնելով, որ հանրապետության տնտեսության զարգացման համար ծրագիրն ունի մեծ պոտենցիալ:

«Գեոթիմ» ՓԲ ընկերությունը ԴՀ խոշոր հարկատուների շարքում զբաղեցնում է 5-րդ տեղը:

2012թ. «Գեոթիմ» ՓԲ ընկերության ներդրման շնորհիվ ամբողջովին ավարտին հասցվեց Գորայքի գրադարանի եւ ուսուցման կենտրոնի վերանորոգումը, որի համար պահանջվեց 19 մլն դրամ: «Գեոթիմ» կազմակերպության համաֆինանսավորմամբ՝ նախատեսվել են ստեղծել հիմնադրամ՝ Գորայքի եւ հարակից շրջանի գյուղերի վիրահատությունների ֆինանսավորման համար: Ըստ նախատեսածի՝ 3-4 մլն դրամ կներդնեն հիմնադրամում ընդգրկված գյուղական համայնքները, իսկ ֆինանսավորման առաջին բաժինը կտրամադրվի «Գեոթիմ» ընկերությանը:

Այս տարիների ընթացքում «Գեոթիմ» ընկերության ֆինանսավորմամբ վերանորոգվել են գյուղի հանդիսությունների սրահը, գյուղի ներքին ճանապարհները, կառուցվել է մանկական խաղահրապարակ: Ընկերությունը նաեւ աջակցություն է ցուցաբերում երկրաբանության եւ հանքարդյունաբերության մասնագիտություններ սովորող ուսանողներին՝ վճարելով նրանց ուսման վճարը (ներկայումս՝ 7 ուսանողի ուսման վարձ է փոխանցում): Տնտեսական, մարզական, սոցիալական տարբեր ծրագրերի միջոցով գյուղում բավականաչափ ներդրումներ են կատարվել: Բուժկետի վերանորոգումից հետո տեղադրվել են նոր սարքավորումներ: Բուժկետի մի մասում նախատեսվում է կառուցել ատամնաբուժարան՝ համապատասխան սարքավորումներով ու պարագաներով:

Ներդրելով գյուղատնտեսության զարգացման համար տարբեր ծրագրեր՝ գյուղացիներին սովորեցրել են մարդեր բանջարեղեն ստանալուն մշակաբույսերի մշակման նոր տեխնոլոգիաներ: 2014թ. մարտ ամսից մեկնարկվել է խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորման ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել կենդանիների մթերատվության մակարդակը. սպասվող սերունդը կրկնապատիկ կաթ կտա: Գյուղին տրամադրվել են նաեւ տեխնիկա՝ հողը մշակելու համար փոքր տրակտոր, գութան, փխրեցուցիչ սարքեր, փոցիներ եւ այլն: Դեռ ԴՀ սկզբանե նրանք որդեգրել էին հետեյալ քաղաքականությունը. կատարվող յուրաքանչյուր աշխատանքում բացառապես ներգրավվել գյուղացիներին, օգտագործել միայն տեղական ռեսուրսները, զարգացնել համայնքը:

Սեզ մնում է միայն ավելացնել. ճանապարհին հանդիպող խոշոր եւ մանր եղջերավոր անասունների նախիրներն ու հոտերը, գյուղում կատարված ու կատարվող աշխատանքները միայն վկայում են գյուղի՝ արագ տեմպերով առաջ շարժվելու մասին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Թանգարանները միավորում են մեզ»

Սշակույթ

ՍԿԶԲԸ ԷՏ 7

որ բոլոր գյուղերն էլ, ավելի կամ նվազ չափով, կարող են նման ցուցադրությամբ հանդես գալ: Ակնարկն ինքնին հասկանալի էր՝ հնագիտական, պատմական արժեք ներկայացնող ամեն ինչ պիտի փրկվե անդառնալի կորստից:

Ինչեւէ, թանգարանի այցելուները բարձրացան երկրորդ հարկ, որտեղ Հիկահող գյուղի անցյալն ու ներկան ամփոփող ցուցադրությունն էր. հարկաբաժնի մուտքին դարաբաղի ճանապարհորդ տեր Գասպար Բաղդասարյանի «Ծաղկաբաղ աշխարհացոյցից» (1820 թվականներ) մի պատառիկ էր. «Եվ գայս Դափանում կա Հիգլայիող գեողաբաղաքս, եւ սորա վերն է Մեղրու սարն անտառախիտ ծառոտ»:

Ցուցադրանքում այս անգամ գերակշռում էին հնագիտական իրերն ու առարկաները, տարբեր տեսակի խեցանոթները, որոնցից որոշների պատրաստման ժամանակը կանոն է հազարամյակների խորքը, կենցաղային պարագաներ, գյուղատնտեսական գործիքներ: Ներկայացված է Հիկահող գյուղի պատմությունը տարբեր ժամանակներում, գյուղի անցյալը՝ լուսանկարներում եւ վավերագրերում, երկրորդ աշխարհամարտին նվիրված նյութերում, ինչպես նաեւ հայրենասիրական արվեստի օրինակներում: Նախապես ներկայացված էին «Մեծ հայրենական» մեր ժամանակների օրինակները, որտեղ հայրենասիրական արվեստի օրինակները օգտագործված էին լուսանկարներում, ինչպես նաեւ հայրենասիրական արվեստի օրինակներում: Նախապես ներկայացված էին «Մեծ հայրենական» մեր ժամանակների օրինակները, որտեղ հայրենասիրական արվեստի օրինակները օգտագործված էին լուսանկարներում, ինչպես նաեւ հայրենասիրական արվեստի օրինակներում:

կարներում եւ վավերագրերում, երկրորդ աշխարհամարտին նվիրված նյութերը ժողովված էին «Մեծ հայրենական» ռազմաճակատ եւ թիկունք», մերօրյա պատերազմին առնչվող վավերագրերը եւ լուսանկարները՝ «Արցախյան գոյամարտ» խորագրերի ներքո: Առանձին ցուցադրանքով ներկայացված էին շիկահողի գիտության եւ մշակույթի նվիրյալները՝ պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Դարոյանյան, տեխնիկական գիտությունների դոկտոր Կլիմենտ Դարոյան, երաժշտագետ Դանիել Երաժիշտ, քիմիկոս Գարեգին Մելքոնյան, գիտնական Ռուբեն Մելքոնյան, կուսակցական-պետական գործիչ Երվանդ Մելքոնյան, ուրիշներ: Հիկահողի բնությունն արտացոլված էր Լուրիկ Սինասյանի գեղանկարչական աշխատանքներում, նա հեղինակել է նաեւ հայրենի գյուղի գինաճաճը:

Կապանի երկրագիտական թանգարանի այս ցուցադրանքի կայացման օժանդակել էին ԴՀ ազգային արխիվի Սյունիքի մասնաճյուղը, պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայությունը, համագյուղացիներ, նախանձախնդիր մարդիկ:

Կապանի N6 դպրոցի աշակերտները ներկայացրին ժողովրդական խաղիկներ, հնօրյա երգեր, աղոթքներ, իսկ Կապանի արվեստի քոլեջի սովորողները թանգարանի բակում հնչեցրին հայ եւ օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է անսարք վիճակում գտնվող համակարգիչների, համակարգչային սարքավորումների եւ հաստոցների աճուրդ՝ ներքոնշյալ մեկնարկային գներով:

N	Գյուղի նկարագիրը	Չափանիշ միավոր	Միավորների քանակ	Գնահատված արժեքը (դրամ)
1	Պրինտեր HP-380F	հատ	4	2560
2	Մոնիտոր DAEWOO	հատ	1	2560
3	Կարգավորիչ UPS intel 800VA	հատ	1	1024
4	Մոնիտոր Miral LCD	հատ	1	2560
5	Մոնիտոր LG, w1942s LCD	հատ	1	4096
6	Լաբրային տպիչ DOCU print P8ex	հատ	1	2560
7	Համակարգիչ Pentium 4, 2.8 GHz, intel chipset, 800 FSB, HDD 80 GB, RAM 256 MB, Video 128 MB, FDD Nic, CD_RW, MOUSE	հատ	1	10240
8	Համակարգիչ Pentium 4, GENX 3,0 GHZ, RAM 512MB,DDR,80 CD, HDD, Combo, FDD	հատ	1	12800
9	Մոնիտոր Cenx-17 LCD	հատ	1	2560
10	Մոնիտոր Cenx SMV_745 A LCD	հատ	1	2560
11	Մոնիտոր Cenx CMV 745	հատ	1	2560
12	Մոնիտոր Orange-17,flatuT	հատ	2	5120
13	Կարգավորիչ UPS intel 800VA	հատ	1	1024
14	Լաբորատոր սարք	հատ	1	2560
15	Համակարգիչ Pentium 4, 2.8GHZ,intel chipset,800 FSB,HDD 80 GB, RAM 256 MB, Video color64 MB,FDD Nic,CD_RW, KB,MOUSE	հատ	1	15360
16	Սկավառակակիր	հատ	1	1536
17	Մոնիտոր 15 Samsung syuc master 551s	հատ	1	2560
18	Մոնիտոր 15 Samsung syuc master 3N	հատ	1	5120
19	Ստեղծաշար, մկնիկ, կոշտ սկավառակ HDD 40 GB , CD ROM,FLOPPY Ppor,Cru celeron1,7 GHzoph,ramDDR 256 Mb	հատ	1	7680
20	Համակարգիչ P-4 3000 524, RAM 512 MB, HDD 80Gb, FDD Sony DVD RW, NEC 7173	հատ	1	15360
21	Մոնիտոր Cenx-17 LCD	հատ	1	2560
22	Speakers F120, dinamik	հատ	1	256
23	UPS 500, transformator	հատ	1	512
24	Մոնիտոր15,P-3 800mhz,256Mb.HDD 20GB-CB_CD	հատ	1	5120
25	Պրինտեր DeskJet 84C	հատ	1	1536
26	Համակարգիչ P-4 3000 524, RAM 512 MB, HDD 80Gb, FDD Sony DVD RW, NEC 7173	հատ	1	12800
27	Համակարգիչ P-4, 3.0 Ghz, LGA ram 512 Mb, DDR, HDD 80 Gb, RDD Cambjo GDD	հատ	1	7680
28	Հաստոց զայլիկունային	հատ	1	35840
29	Հաստոց ֆուզան	հատ	1	46080

Աճուրդը կկայանա 2014թ. հունիսի 8-ին, ժամը 14:00-ին, ԳՊՀ-ի գրադարանի մասնաշենքում: Աճուրդի մասին տեղեկատվություն կարող եք ստանալ համալսարանի հաշվապահությունից (հեռ. 2 06 95):

Աճուրդային հանձնաժողով

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ ՄԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԿԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԻՐ ԿԵՆՏՐՈՆ «ՍՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՏՈՒՄ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԳՆԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Գեոթիմ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02: Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ» - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Գոյնը «Այունյաց երկիր» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 04.06.2014թ.: